Խ. Ս. Հ. Մ. ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀԱՇՎԱՌՄԱՆ-ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

# ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

## 1938 ԹՎԻՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՇԻՎ-ՆԵՐԻ ՓԱԿԵԼՈՒ ԿԱՐԳՆ ԸՍՏ 1938 ԹՎԻ ՀԱՇ-ՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՎ

Հավելված—կից կոլտնտեսություն-ների 1938 թվի տարեվերջի հաշվե-տվությունները կազմելու մասին:

657
Խ-11

ԵՐԵՎԱՆ 1938 Թ.

24.586

657
խ-11

24 SEP 2010

Գոս. Հանրային գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-СОРА
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

219
39

# ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

## 1938 ԹՎԻՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՓԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԸՍՏ 1938 ԹՎԻ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՎ

*Տարվա վերջում տարեկան հաշվետվություն կազմելու և բերքի բաշխման ժամանակ՝ հաշիվների ճիշտ փակելն ունի կարևոր նշանակություն։*

*Անցյալ տարիներում շատ կոլտնտեսություններ վորպես կանոն հաշվառման բարդության և խճճվածության պատճառով, չկարողացան հաշիվները փակել։ Այդ դժվարեցրեց նաև կազմելու տարեկան հաշվետվությունը և հետևյալ տարում գրքերում հաշիվներ բացելը։*

*Հաշիվների փակումը պետք է կատարվի 1938 թվի դեկտեմբերի 31-ին ըստ առ 1/I 1939 թ. առկա դրությամբ։*

*Այդ ժամանակընթացքում կոլտնտեսության հաշվետարը պարտավոր է ավարտել գրքերում կատարվող բոլոր գրանցումները և ընդհանուրի բերի, ինչպես ամսեկան, նույնպես և տարեկան շրջանառության գումարները։*

*Ինվենտարիզացիայից առաջացած արդյունքների գրանցումը, ինչպես նաև հաշիվների փակման հետ կապված գրանցումները, անհրաժեշտ է անցկացնել դեկտեմբերի 31-ի թվով, անկախ նրանից, վոր փաստացիորեն այդ գրանցումները կարող են մի քիչ ավելի ուշ կատարվեր։*

*Ընդ վորում մի քանի փաստաթղթեր (օրինակ՝ բանկի տեղեկանքը ընթացիկ հաշվով տոկոսների հաշվումը, հաշվետու անձանց հաշվետվությունները, 1938 թ. ստացված ավանսները) անց են կացվում (տարածվում են գրքերում) դեկտեմբերի 31-ի թվականով, նույնիսկ այն ժամանակ, յեթե նրանք ստացել են հետևյալ տարում։*

Կիրովականի տպարան

Գլավլիտի լիազոր Մ—5717 Պատվեր № 2265 Տիրաժ 1150

11 SEP 2013

Գրքերում կատարված գրանցումները ճշտելու համար հարկավոր է բոլոր հաշիվներից կազմել շրջանառության տեղեկագրեր և դուրս բերել մնացորդները:

Գրքերի մնացորդները պարտադիր կարգով պետք է համեմատվեն ինվենտարիզացիայի տվյալների հետ:

Հաշվապահական գրքերով ըստ հաշիվների դուրս բերված մնացորդները ինվենտարիզացիայի տվյալների հետ համեմատելու ժամանակ հայտնաբերված բոլոր տարբերությունները պիտի ներկայացվեն կոլտնտեսականների ընդհանուր ժողովում և կամ կոլտնտեսության վարչության նիստում քննության առնելու: Այդ տարբերությունների ուղղումը գրքերում գրանցելու համար կատարվում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովի և կամ վարչության հանած վորոշման հիման վրա:

Հաշիվների փակման հետ կապված հաշվապահական գրանցումները ձևակերպելու համար կոլտնտեսության հաշվապահը պարտավոր է կազմել տեղեկանքներ, վորոնցում անհրաժեշտ է ցույց տալ գրանցման բովանդակությունը (ըստ ոժանդակ հաշիվների հատվածի, ինչ վոր հաշվից և վոր հաշվին է փոխանցվում) և գրանցման գումարը: Այդպիսի տեղեկանքներ կազմելու հիմքը հանդիսանում է փակման ենթակա հաշիվների գրքերում կատարված գրանցումները և ընդհանուր ժողովի կամ կոլտնտեսության վարչության հանած վորոշումները:

Ինվենտարիզացիայի հետևանքով առաջացած հաշվապահական գրանցումները հիմնականում հետևյալն են՝

1. Մինչև ինվենտարիզացիա անցկացնելը այս կամ այն պատճառով մուտք չարված գույքի մուտք գրումը:

ԴՏ հաշիվ № 1 «Արտադրության հիմնական միջոցներ» (համապատասխան ենթահաշվով):

ԿՏ հաշիվ № 9 «Անբաժանելի ֆոնդեր և փայական մուծումներ» № 5 ենթահաշվով կուտակումներ շինարարության մեջ և անտեսության կարիքների համար պատրաստված արտադրական միջոցները (կոլտնտեսության կողմից պատրաստված նյութերի արժեքը և կոլտնտեսականների աշխատանքային ներդրումները):

2. Մինչև ինվենտարիզացիա անցկացնելը, այս կամ այն պատճառով մուտք չարված մատղաշ անասունի մուտք գրումը:

ԴՏ հաշիվ № 2 «մատղաշներ և բտման հանձնված անասուններ»:

ԿՏ հաշիվ № 10 «Անասունների աճը և քաշի ավելացումը»:



3. Սեփական արտադրության ավելցուկ մթերքների մուտք գրումը:

ԴՏ. հաշիվ № 3 «Մթերքներ և նյութեր»:

ԿՏ. հաշիվ № 19 «Բնաբերքային եկամուտ և նրանց բաշխումը»:

4. Ավելցուկ նյութերի մուտք գրումը:

ԴՏ. հաշիվ № 3 «Մթերքներ նյութեր» (համապատասխան ենթահաշվով):

ԿՏ. հաշիվ № 9 «Անբաժանելի ֆոնդեր և փայական մուծումներ» ենթահաշիվ 5:

5. Արտադրության հիմնական միջոցի և անասունի՝ (բացի մատղաշների) նրա խնամող անձի հանցանքով կորցվելու կամ փչանալու դեպքում, դուրս գրումը կատարել նրան խնամող անձի հաշվին (ձեռք բերման հնարավոր արժեքով):

ա) դուրս գրում:

ԴՏ. հաշիվ № 18 «Արտադրության հիմն. միջոց. և անասունների դուրս գրում (հասակավոր և մատղաշ):

ԿՏ. հաշիվ № 1 «Արտադրության հիմնական միջոցներ»:

բ) մեղավոր անձի հաշվին գրանցելը:

ԴՏ. հաշիվ № 8 «հաշվարքներ կազմակերպությունների և անձերի հետ»:

ԿՏ. հաշիվ № 18 «Արտադրության հիմ. միջոց. և անասունների դուրս գրում (հասակավոր և մատղաշներ),

Յեթե արտադրության հիմ. միջոց. և անասունների (բացի մատղաշների) պակասորդը չի կարելի ձևակերպել մեղավոր անձի հաշվին այդ դեպքում ձևակերպվում է անբաժանելի ֆոնդի հաշվին: Այդ դեպքում կատարվում է տարածում:

ա) դուրս գրման ժամանակ:

ԴՏ. հաշիվ № 18 «Արտադրության հիմ. միջոց. և անասունների դուրս գրում» (հասակավոր և մատղաշներ):

ԿՏ. հաշիվ № 1 «Արտադրության հիմնական միջոցներ»:

բ) անբաժանելի ֆոնդի հաշվին արժեքը տեղափոխելու ժամանակ (տարվա վերջում № 18-րդ հաշիվը փակելու ժամանակ):

ԴՏ. հաշիվ № 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» ենթահաշիվ 4-րդ:

«Անասունների սերնդից և աճից հաշվի առնված արժեքները» կամ 3-րդ «հատկացումներ եկամուտից համաձայն գյուղ. արտելի կանոնադրության 12-րդ կետի»:

ԿՏ. հաշիվ № 18 «Արտադրության հիմ. միջոցների և անա-

ունների դուրս գրում (հաստկավոր և մատղաշներ), համանման տարածում, ինչպես կատարվում է պակասորդ գույքը դուրս գրելու ժամանակ կատարվում է նաև մատղաշ անասունների պակասորդ տալու ժամանակ։ Այդ դեպքում կրեդիտագրվում է վոչ թե № 1 հաշիվը «Արտադրության հիմնական միջոցներ» այլ № 2-րդ հաշիվը «Անասուններ և մատղաշ անասուններ և բտման հանձնված անասուններ»։ Անբաժանելի ֆոնդերում այդ գումարը գրանցվում է № 4 յենթահաշվին «Անասունների սերնդից և աճից ձաշվի առնված արժեքներ։

6. Պակասորդ մթերքներ և նյութերի դուրս գրումը, վորոնք առաջացել են բնական կորուստների հետևանքով) հացահատիկի չորացում, կարտոֆիլի և բանջարեղենային կուլտուրաների տականք պահելու դեպքում և այլն) ձևակերպվում է հետևյալ տարածումով.

ԴՏ. հաշիվ № 14 «Արտադրական կարիքների վրա կատարված ծախս» յենթահաշիվ № 1.

«Ծախսեր բնական յեկամուտների հաշվին»։

ԿՏ. հաշիվ № 3 «Մթերքներ նյութեր» (համապատասխան յենթահաշիվ)։ Մթերքներ նյութերի պակասորդը, վորը առաջացել է անտնտեսվար (կերպով նրանց պահելու և օգտագործելու հետևանքով կամ պետք է գանձել բնամթերքով և կամ թե շուկայական արժեքով ձևակերպել մեղավոր անձի հաշվին ընդհանուր ժողովի կամ վարչության վորոշումը հանձնելով գործը դատարան)։

Դրամի պակասորդը անմիջականորեն վերաբերվում է այն անձին, վորը պատասխանատու յե նրա պահպանման համար։

Ինվենտարիզացիայից բղխող բոլոր կարգավորիչ գրանցումները կատարվելուց հետո, հաշվետարը ձեռնարկում է յեզրափակիչ հոդվածների կազմելուն։

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Կոլտնտեսության դրամական յեկամուտների բաշխումը պետք է կատարվի ճշտությամբ արտելի կանոնադրության համապատասխան։

Կոլտնտեսությունում դրամական յեկամուտի մուտքերը տարվա ընթացքում հաշվի յեն առնվում յերեք գլխավոր հաշիվներում՝ № 17 հաշվով «պետական հանձնումներ և վաճառք (բա-



ցի անասուններից) և № 18 հաշվով «Արտադրության հիմնական
միջոցների և անասունների դուրս գրում (հաստկավոր և մատ-
ղաշ) և № 20 հաշվով» դրամական յեկամուտներ և նրանց բաշ-
խումը։
Հաշիվների փակման ժամանակ № 17 և 18 հաշիվներից դրա-
մական յեկամուտները փոխանցվում են № 20 հաշվի «դրամական
յեկամուտներ և նրանց բաշխումը» № 1 յենթահաշվի կրեդիտին
ըստ նախահաշվի հոդվածների, ինչպես այդ սահմանված է հա-
շիվների թղթակցությամբ։
Կարելի յե նաև այլ կերպ մոտենալ. դրամական յեկամուտ-
ները ուրիշ հաշիվներից տեղափոխելիս (№ 17, № 18 և № 20)։
Կարելի յե փոխադրել վոչ թե առաջին, այլ ուղղակի № 20 «դրա-
մական յեկամուտներ և նրա բաշխումը», հաշվի յերկրորդ յեն-
թահաշվին, բնագրում գումարների փոխանցումը գրանցելով ըստ
նախահաշվի մուտքի մասի հոդվածների բաժանումի։ Այդ դեպ-
քում № 20 «դրամական յեկամուտներ և նրանց բաշխումը» հաշ-
վի առաջի յենթահաշվից փոխադրվում է միայն այն դրամական
յեկամուտների գումարները, վորպիսին տարվա ընթացքում հաշ-
վի յեն առնվել նրանում։
Այդպիսի կարգը կարող է մասամբ թեթևացնել աշխա-
տանքի տեխնիկան։
Բնաբերքային մթերքների, անասնաբուծության (հաշվելով
և մսամթերքները), և օժանդակ ձեռնարկների պտույքների և
վերամշակումի վաճառքից և հանձնումից ստացված դրամական
յեկամուտները տարվա ընթացքում հաշվի յեն առնվել № 17
«Պետական հանձնումներ և վաճառք (բացի անասուններից) հաշ-
վի կրեդիտում, հետևաբար այդ հաշվի կրեդիտի շրջանառությու-
նը (բացի մսամթերքների վաճառքից ձեռք բերված գումարնե-
րը, յեթե նրանք յենթակա չեն բաշխման) իրենից ներկայաց-
նում է կոլտնտեսության դրամական յեկամուտը»։ Դրա համար էլ
№ 17 «Պետական հանձնումներ և վաճառք (բացի անասուններից)»
հաշվի կրեդիտի շրջանառության ամբողջ գումարը պետք է փո-
խանցել դրամական յեկամուտի մեջ բացառությամբ մսամթերք-
ների վաճառքից ձեռք բերված գումարը, վորը յենթակա չէ
բաշխման և ուղղիչ տարածումների գումարները։ Այդպիսով կա-
տարվում է տարածում։

ԴՏ. հաշիվ № 17 «Պետական հանձնումներ և վաճառք (բա-
ցի անասունից)» յենթահաշիվ № 1, 2 և 3։

ԿՏ. հաշիվ № 20 «Դրամական յեկամուտ և նրանց բաշխումը» յենթահաշիվ № 1 (նախահաշվի մուտքի մասի 1, 2, 3, 5, 10 և հարկավոր է նկատի ունենալ, վոր № 17 «Պետական հանձնումներ և վաճառք 12 հոդվածների) (բացի անասուններից) հաշվի այն ոժանդակ հաշիվներում, վորոնցով հաշվի յե առնվում գնված մթերքների վաճառքը՝ նույնպես և անցյալ տարվանից մնացած իրացված մթերքները փոխանցվում են № 20 «դրամական յեկամուտներ և նրանց բաշխումը» (նախահաշվի 12 հոդված) հաշվին, վոչ թե կրեդիտային շրջանառությունը, ինչպես կատարվում է այդ հաշվի մյուս ոժանդակ հաշիվներում, այլ փոխանցվում է միայն կրեդիտային մնացորդը։

Այդ արվում է նրա համար, վորովհետև անցյալ տարվանից չիրացված մթերքները մուտք գրած արժեքներով մտցված են անցյալ տարվա յեկամուտների մեջ և բաշխվել են անցյալ տարի։

Գնված մթերքները վաճառելու ժամանակ, յեթե այդ մթերքը վաճառված է ավելի բարձր արժեքով, քան գնման արժեքը, ընթացիկ տարվա նոր յեկամուտը հանդիսանում է վոչ թե ամբողջ ձեռք բերված գումարը, այլ միայն մուտք գրման արժեքի և վաճառքի արժեքի միջև յեղած տարբերությունը։

Ինչպես մենք արդեն ցույց ավեցինք, վոր տարվա ընթացքում մսամթերքների վաճառքից ձեռք բերվածը հաշվի յե առնվում № 17 «Պետական հանձնումներ և վաճառք (բացի անասուններից)» հաշվի կրեդիտում, իսկ կենդանի անասունի վաճառքից ձեռք բերվածքը № 18 «Արտադրության հիմ. միջոցների և անասունի (հասակավոր և մատղաշ)» հաշվի կրեդիտում. հարցը կայանում է նրանում թե կոլխոզային առևտրի կարգով վաճառվածից ձեռք բերված գումարից № 17 և 18 հաշիվներից ինչ չափով փոխանցել դրամական յեկամուտի հաշվին։ Այդ հարցը վորոշվում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից կախված այն բանից, թե ինչ չափով կոլտնտեսությունը կատարել է իր անասնապահության զարգացման պլանը։

Յեթե անասնապահության զարգացման պլանը կատարված է, այդ դեպքում կատարվում է հետևյալ տարածումը.

ԴՏ. հաշիվ № 18 «Արտադրության հիմնական միջոցների և անասունների դուրս գրում (հասակավոր և մատղաշ)» յենթահաշիվ 4, 5 և 6։

ԴՏ. հաշվի № 17 «Պետական հանձնումներ և վաճառք (բացի անասուններից)» վաճառված անասնամթերքների մասով)։



ԿՏ. հաշիվ № 20 «դրամական յեկամուտներ և նրանց բաշխումը» յենթահաշիվ 1 կամ 2 (նախահաշվի մուտքի մասի № 6, 7, 8 հոդվածներով)։

Յեթե անասնապահության զարգացման պետական պլանը կոլտնտեսության կողմից չի կատարվել, կոլտնտեսության ընդհանուր ժողովը պարտավոր է վորոշել թե ցույց տրված գումարից, վորքան միջոց անհրաժեշտ է փոխանցել՝ հոտի վերականգնումը և լայնացումը ապահովելու համար։

№ 17 և 18 հաշիվներից հատկացվող այդ գումարները հաշվվում են արդեն, վոչ թե կոլտնտեսության յեկամուտ, այլ հաշվվում են անբաժանելի ֆոնդի մեջ հետևյալ տարածումով։

ԴՏ. հաշիվ № 17 «Պետական հանձնումներ և վաճառք (բացի անասունից)։

ԴՏ. հաշիվ № 18 «Արտադրության հիմն. միջոցն և անասունի դուրս գրում (հասակավոր և մատղաշներ)։

ԿՏ. հաշիվ № 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» յենթահաշիվ 4։

Պարտադիր կարգով հանձնված անասունի վաճառքից ձեռք բերված գումարը, վորը հաշվի յե առնված № 18 հաշվի 4-րդ յենթահաշվում, ամբողջությամբ մտնում է դրամական յեկամուտի մեջ։

Բաշխվող դրամական յեկամուտի մեջ հաշվվում է նաև այն մթերքների արժեքը, վորոնք ընդհանուր ժողովի վորոշմամբ առանձնացված են հետագա տարում վաճառելու համար։

Նախ քան այդ արտադրանքի դրամական յեկամուտի հաշվելը՝ ընդհանուր ժողովը պարտավոր է վորոշել՝ կարիք կա վերագնահատել նրան վաճառահանման հնարավոր արժեքով։

Արտադրանքի վերագնահատումը ձևակերպվում է.

ԴՏ. № 3 հաշիվ «Մթերքներ նյութեր»։

ԿՏ. № 19 հաշիվ «Բնաբերքային յեկամուտ և նրա բաշխումը» վորից հետո կատարվում է մինչ վերագնահատված բնամթերքի արժեքի տարածումը դրամական յեկամուտի մեջ։

Դրա համար կատարվում է հետևյալ տարածումը՝

ԴՏ. № 19 «Բնամթերքային յեկամուտ և նրա բաշխում» յենթահաշիվ 1, 2, 3 և 4։

ԿՏ № 20 «Դրամական յեկամուտ և նրանց բաշխումը յենթահաշիվ 1 կամ 2։

Այդ բոլոր գործողությունները գրանցելուց հետո № 20

դրամական յեկամուտ և նրանց բաշխումը «Հաշվի կրեդիտում կկենտրոնանան բոլոր դրամական յեկամուտները:

Այնքան վորքան գրանցումները կատարվում են նախահաշվի մուտքի հոդվածներով, հետևաբար դրամական յեկամուտ հաշվի կրեդիտում գրանցված տարեկան շրջանառությունը կհանդիսանա կոլտնտեսության նախահաշվի ՄՈՒՏՔԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ըստ առաջին բաժնի: Փաստաթղթերից քաղվածքներ անելու և կամ նախահաշվի կատարման գծով առանձին գիրք տանելու անհրաժեշտությունը, ինչպես տեսնում ենք վերանում է:

Պատրաստելով տվյալները՝ նախահաշվի մուտքի մասի կատարողականի վերաբերյալ հաշվապահը հաշվում է ոժանդակ հաշվում № 1 յենթահաշվի շրջանառության բոլոր գումարները և փոխանցում է «դրամական յեկամուտների բաշխման» հաշվի № 2 յենթահաշվին հետևյալ տարածումով.

ԴՏ. հաշիվ № 20 «դրամական յեկամուտներ և նրանց բաշխումը» յենթահաշիվ № 1:

ԿՏ. հաշիվ № 20 «դրամական յեկամուտներ և նրանց բաշխումը» յենթահաշիվ № 2:

Յեթե դրամական յեկամուտները ուրիշ հաշիվներից միանգամից փոխանցվել են «դրամական յեկամուտի և նրա բաշխման» հաշվի № 2 յենթահաշվին, հետևաբար այդ տարածումը չի կատարվում:

Հետո՝ հաշվապահը պատրաստում է նյութեր, նախահաշվի ծախսային մասի առաջին բաժնի կատարողականի հաշվետվությունը կազմելու համար: Դրա համար նա ոգտագործում է հաշիվներում հաշվի առնված ծախսումների այն գրանցումները, վորոնք կատարվել են դրամական յեկամուտի հաշվին:

Այդ դեպքում հաշվապահական գրանցումները կատարվում են համաձայն գյուղ. արտելի որինակելի կանոնադրության № 12-րդ կետի:

№ 20 «դրամական յեկամուտներ և նրանց բաշխումը» հաշվի № 2-րդ յենթահաշվում գրանցվում են հետևյալ գործողությունները.—



| Գործողության անվանումը | Կրեդիտագրվող հաշիվներ |
|---|---|
| Տարվա վերջում հարկերի գանձումների և ապահովագրական վճարումների դուրս գրում և վճարման յենթակա | № 15 հաշիվ «հարկեր գանձումներ և ապահովագրական վճարումներ» (նախահաշվի ծախսային մասի 1, 2 և 3 հոդվածներն) |
| Դրամական յեկամուտից տրակտորիստների աշխորերի հասանելիք հաշվում (միաժամանակ ԴՏ № 6 հաշիվ ԿՏ № 8 հաշիվ) | № 6 հաշիվ «հաշվարքներ կոլտնտեսականների հետ» (նախահաշվի ծախսային մասի № 25 և 27 հոդվածները): |
| Կոլտնտեսության անդամների աշխորերին հասնող դրամական յեկամուտի հաշվում: | № 6 հաշիվ «հաշվարքներ կոլ. անդամների հետ» (նախահաշվի ծախսային մասի 24 և 26 հոդվածներ): |
| Գնված սերմացույից ծախսվածի արժեքի դուրս գրումը, բացի կերից և այլ նյութերից նույնպես և արտադրական կարիքների համար կատարված դրամական ծախսերը: | № 14 հաշիվ «Արտադրական կարիքների վրա կատարված ծախսերը» (5, 6, 7, 8, 10 և 11) բացի ոժանդակ ձեռնարկներում աշխատող մասնագետների աշխատավարձը (նախահաշվի յելքի մասի 12, 13, 14, 15 և 17 հոդվածներ): |
| Արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկներում դրամական յեկամուտների հաշվին կատարված ծախսումների դուրս գրումը (բացի սեփական կարիքների համար պատրաստած արտադրության հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը) նույնպես և կոլտնտեսականների կենցաղը բարելավող ձեռնարկներում և հասարակական սննդի գծով կատարվող ծախսերը: | № 12 հաշիվ «ձեռնարկների ծախսեր արտադրանքի վերամշակում» (նախահաշվի ծախսային մասի 9 և 11 հոդվածներ): |
| Վարչակառավարչական տնտեսական ծախսերի դուրս գրում: | № 16 հաշիվ «վարչա-կառավարչական-տնտեսական ծախսեր» (նախահաշվի ծախսային մասի 19 և 20 հոդվածներ): |
| Ընդհանուր ժողովի վորոշմամբ կուլտուրական կարիքների համար միջոցների առանձնացումը, ինչպիսին են՝ բրիգադիրների և ուրիշ կադրերի պատրաստման, մանկամսուրների կազմակերպման ռադիո կահավորման: | № 11 հաշիվ «Փոնդեր կուլտուրական կարիքների համար (նախահաշվի ծախսային մասի 23-րդ հոդվածը): |
| Ընդհանուր ժողովի վորոշմամբ միջոցների առանձնացում անբաժանելի դրամագլուխը լրացնելու համար համաձայն գյուղ. արտելի կանոնադրության 12-րդ կետի: | № 9 հաշիվ «անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ (նախահաշվի ծախսային մասի 22 հոդված): |

№ 20 «դրամական յեկամուտներ և նրանց բաշխում» հաշվի № 2 «դրամական յեկամուտների բաշխումը, յենթահաշվում գրանցումներ կատարելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը՝

1. Արտելի անդամների միջև ըստ աշխօրերի բաշխման յենթակա ընդհանուր գումարը պետք է կատարվի համաձայն արտելի կանոնադրության։

2. Տրակտորիստների աշխօրերին յեկամուտից հանձնող գումարի հաշվումը կատարվում է ապահովվող մինիմումի չափով, այսինքն 2 ռ. 50 կոպ. յուրաքանչյուր աշխօրին, յեթե կոլտնտեսականների աշխօրի արժեքը ավելի բարձր կլինի ապահովող մինիմումից, հետևաբար տրակտորիստների աշխօրին տրվում է այնքան, վորքան հասնում է կոլտնտեսականներին։

Յեթե տարվա ընթացքում ապահովվող մինիմումի չափով գրանցված է № 20 դրամական յեկամուտ և նրանց բաշխումը հաշվի № 2 յենթահաշվին, այդ դեպքում 2 ռ. 50 կոպ. նախատեսված գումարից ավելի հասնող գումարի գրանցումը կատարվում է տարվա վերջում։

3. Տեխ կուլտուրաների հանձնման պլանը գերակատարող ոդակի անդամներին տրվող պարգևատրումները (շաքարի ճակնդեղ, կանեփ և այլն), կոնտրակտային պլանի գերակատարման առթիվ կոլտնտեսության ստացած հավելում պարգևները նույնպես մտնում են կոլտնտեսականների աշխօրերին տրվող դրամական յեկամուտների մեջ։

Միաժամանակ այս բանի կապակցությամբ, վոր պարգևատրումները տրվում են վոչ բոլոր կոլտնտեսականներին, այլ տրվում է միայն ճակնդեղի կանեփի և ուրիշ տեխնիկական կուլտուրաների հանձնման պլանը գերակատարող ոդակի անդամներին, կոլտնտեսության մեկ աշխօրին դրամով տրվող գումարի չափը վորոշելու ժամանակ պարգևատրման գումարը ամբողջապես հանվում է։

4. Յեթե № 14 «ծախքեր արտադրական կարիքների համար» հաշվում ուրիշ ծախքերի հետ հաշվի յեն առնվել նույնպես անցած տարվանից մնացած գնված նյութերի ծախսումները (վորոնց արժեքը ըստ Գայլիսի և ուրիշների ձեռնարկում տրված ֆինանսարարական դրվածքի հաշվի յե առնվել № 9 հաշվի «Այլ շրջանառու ֆոնդեր» № 9 յենթահաշվում, ընթացիկ տարում այդ նյութերի ծախքի գումարը պետք է ծածկվեն վոչ թե դրամա-



կան յեկամուտի հաշվին, այլ այդ նույն գումարի հաշվին» այլ շրջանառու ֆոնդեր «ընդ վորում կատարվում է հետևյալ տարածումը՝

ԴՏ. № 9 հաշիվ «անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» յենթահաշվի 5-րդ.

ԿՏ. հաշիվ № 14 «Ծախքեր արտադրական կարիքների համար» յենթահաշիվ № 2-րդ։

Այդ արվում է նրա համար վոր 1936-37 թ. թ. հաշվային պլանով «այլ շրջանառու ֆոնդեր» № 9/9 հաշվից գումարները հանվում և փոխանցվում նոր հաշվային պլանի № 9/3 հաշվին։

5. Փոխատվության հաշվին գնված նյութերի ծախսերը, վորոնց մարման ժամկետը ընթացիկ տարում չի հասել, ընթացիկ տարվա դրամական յեկամուտներից դուրս չի գրվում։ Այլ մնում է № 14 հաշվում վորպես դեբետային մնացորդ։

## ԲՆԱՄԹԵՐՔԱՅԻՆ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

Բուսաբուծությունից, անասնապահությունից, արդյունաբերական ձեռնարկներից և վերամշակումից ստացված բնամթերքային յեկամուտային հաշվառումը ըստ նոր հաշվային պլանի տարվում է № 19 «Բնամթերքային յեկամուտ և նրանց բաշխումը» հաշվով ընդ վորում բնամթերքային յեկամուտի հաշվառման ոժանդակ հաշիվներում հաշիվները բացվում են ըստ կուլտուրաների, անասնապահության, վերամշակվող մթերքների տեսակի և ձեռնարկների պիտույքների տեսակի։

№ 19 «Բնամթերքային յեկամուտներ և նրանց բաշխումը» հաշվի ոժանդակ հաշիվներով շրջանառությունը ընդհանուրի բերելով (քանակով և գումարով) հաշվապահը կազմում է բերքի և անասնապահության մթերքների բաշխման տեղեկագիր։

Բերքի բաշխումը կատարելու համար անհրաժեշտ է կազմել մոտավորապես հետևյալ ձևի տեղեկագիրը (տես յերես. ) նույնանման տեղեկագիր կազմվում է նաև անասնապահության մթերքները բաշխելու համար, բացառությամբ մի քանի սյունյակների։ Տեղեկագրի կազմումը կատարվում է մի քանի տվյալների հիման վրա։ Բերքի քանակի և արժեքի, անասնապահության մթերքների, արդյունաբերական ձեռնարկումների և վերամշակումի, ստացված մթերքների տվյալները վերցվում են № 19

«բնամթերքային եկամուտ և նրանց բաշխումը» հաշվի կրեդիտ (ենթահաշիվ 1, 2, 3 և 4) «Պետության հանձնումը» (վաճառք) ըստ պարտադիր հանձնումի և կոնտրակտացիոն պայմանագրի սյունյակը լրացվում է № 17 հաշվի 1-ին ենթահաշվի գրանցումների հիման վրա (Պետմթերման և կոլխոզային առևտրի հաշվառման գիրք)։

«Բնավարձ ՄՏԿ-ի աշխատանքների համար» սյունյակը լրացվում է № 14-րդ հաշվի 1 ենթահաշվում կատարված գրանցումների հիման վրա։

«Փոխառու սերմերի վերադարձում սյունյակը լրացվում է № 8 հաշվի գրանցումներից (ոժանդակ հաշիվը հաշվառքներ ըստ վարձերի)։

Սյունյակներ «առանձնացված է սերմացուի և անձեռնամխելի ապահովագրական սերմֆոնդի համար» առանձնացված է անասուններին կերակրելու և անձեռնամխելի ապահովագրական կերի ֆոնդի համար «առանձնացված է ֆոնդ հաշմանդամներին, ծերերին, ժամանակավորապես աշխատունակությունը կորցրածներին, կարմիր բանակայինի կարիքավոր ընտանիքներին օգնելու և մանկամսուրների ու վորբերի պահպանության համար» լրացվում են հիմք ունենալով կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից հաստատված եկամուտների բաշխման պլանը։

Անձեռնամխելի ապահովագրական (սերմային և կերային) ֆոնդերը կազմվում են տարեկան պահանջի 10—15%-ի չափով հաշվի առնելով փաստացի եղած ապահովագրական ֆոնդի չափը։

Յեթե ցույց տրված քանակությամբ ապահովագրական ֆոնդը լրիվությամբ գտնվում է առկա, այդ դեպքում նոր ֆոնդ չի կազմվում, այլ միայն կատարվում է անցած տարվա հացահատիկի փոխանակումը ընթացիկ տարվա հացահատիկի հետ նախկին քանակությամբ։

«Փաստորեն վաճառված պետմթերողներին և կոոպերացիային» և «փաստորեն վաճառված է կոլխոզային առևտրի կարգով» լրացվում է № 17 «պետհանձնումներ և վաճառք» (բացի անասուններից) հաշվից։ Առաջի դեպքում տվյալները վերցվում է № 2-րդ ենթահաշվից, 2-րդ 3-րդ ենթահաշվից։

«Առանձնացված է կոլխոզային առևտրի կարգով վաճառելու բայց դեռ չի վաճառված» սյունյակը լրացվում է ընդհանուր ժողովի վորոշման հիման վրա։

«Այլ ծախքեր» սյունակը (պահպանման ժամանակ չորացում, տեսակավորումից առաջացած տականք և այլն) լրացվում է № 14-րդ հաշվի № 1-ին ենթահաշվում կատարված գրանցումների հիման վրա։ Ոժանդակ հաշիվ «մթերքների բնական կորուստ» մնացած բոլոր բերքի քանակը և անասնապահության մթերքները գրանցվում են վերջին սյունյակում։ «Վորոշված է բաշխելու կոլտնտեսականներին և տրակտորիստներին, ըստ աշխօրերի (հաշվելով նաև փաստացի վճարված է)։

Ընդ վորում, յեթե պարզվեց, վոր կոլտնտեսականների մեկ աշխօրին տրվող հացահատիկի չափը 3 կիլոյից ավելի ցածր է, այդ դեպքում սկզբից վորոշվում է անհրաժեշտ հացահատիկի քանակը ապահովող մինիմումի չափով տրակտորիստներին վճարելու համար (յուրաքանչյուր աշխօրին վոչ պակաս 3 կիլոգրամից), վորից հետո վորոշվում է կոլտնտեսականների աշխօրերին հասանելիքի չափը։

Կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից հաստատված բաշխման տեղեկագիրը և գրանցումները գրքերում հիմք են ծառայում № 19 «Բնաբերքային եկամուտ և նրանց բաշխումը» հաշվի ոժանդակ գրքերը փակելու համար (յուրաքանչյուրը առանձին)։

№ 19 «Բնաբերքային եկամուտ և նրա բաշխումը» հաշվի № 1-ի «Բուսաբուծությունից» №, 2-րդ «անասնապահությունից» № 3-րդ «Արդյունաբերական ձեռնարկություններից» և № 4-րդ «վերամշակումից» ենթահաշիվների դեբետում գրանցելու համար հարկավոր է կազմել հետևյալ հոդվածները։

| Գործողության անվանումը | Կրեդիտագրվող հաշիվներ |
| --- | --- |
| Սեփական անտեսության բերքից ընթացիկ տա ում վաճառած մթերքների վերաառումը (դեբետային շրջանառությունը ըստ յուրաքանչյուր ոժանդակ հաշվի քանակով և գումարով փոխանցելը)։ | № 17 «Պետական հանձնում և վաճառք բացի անասունից»։ |
| ՄՏԿ-ի կատարած աշխատանքի առթիվ բնավճարի վերաառումը (քանակով և գումարով ըստ կուլտուրաների)։ | № 14 «Ծախքեր արտադրական կարիքների համար»։ |
| Ծախսված սերմացուի դուրս գրում կատարված փոխադրավարձի հաշվին, ընթացիկ տարում վերադարձվող մասով։ | № 14 «Ծախքեր արտադրական կարիքների համար»։ |

| | |
|---|---|
| Հիմնական սերմացուի ֆոնդին սերմացուի առանձնացում տարեկան պահանջի չափով։ | № 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» ենթահաշիվ 7 «սերմային ֆոնդ» (հիմնական և ապահովագրական)։ |
| Նույն ապահովագրական սերմացուի ֆոնդին։ | № 9 հաշիվ «անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ, ենթահաշիվ 7» սերմային ֆոնդ (հիմնական և ապահովագրական)։ |
| Հիմնական անասնակերի ֆոնդին անասնակերի առանձնացումը։ | № 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ, ենթահաշիվ 8 անասնակերի ֆոնդ» (հիմնական և ապահովագրական)։ |
| Նույնը ապահովագրական անասնակերի ֆոնդին։ | № 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ, ենթահաշիվ 8» անասնակերի ֆոնդ (հիմնական և ապահովագրական)։ |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գրանցումների անցյալ տարվանից առկա ունեցած ապահովագրական նորոգման գծով (սերմային և կերային ֆոնդերը № 19 հաշվի գծով չի կատարվում)։ № 19 հաշվով տարածումներ կատարվում են միմիայն ապահովագրական ֆոնդերի ավելացման և նորի ստեղծման առթիվ, յեթե նրանք ծախսված են։

Առանձնացված ֆոնդերը գրանցելու համար հիմք հանդիսանում է կոլտնտեսականների ժողովի կողմից հաստատված բերքի բաշխման տեղեկագիրը։

| | |
|---|---|
| Գալիք տարում վաճառելու համար առանձնացված բնաբերքային յեկամուտի արժեքը դրամական յեկամուտի մեջ հաշվի առնելու համար։ | № 20 «դրամական յեկամուտներ և նրանց բաշխումը» ենթահաշիվ 1 «դրամական յեկամուտ» (ըստ հոդվածների) կամ թե ենթահաշիվ 2 «դրամական յեկամուտի բաշխումը»։ |
| Բնամթերքից՝ հաշմանդամներին օգնելու, ծերերին, ժամանակավոր աշխատունակությունը կորցրածներին, կարմիր բանակայինների կարիքավոր ընտանիքներին, մանկամսուրների և որբերին պահպանելու համար ֆոնդի առանձնացում ոչ ավել բնաբերքային ընդհանուր յեկամուտի 2%-ից։ | № 11 «Օգնության ֆոնդ կուլտուրական կարիքների համար» ենթահաշիվ 1 «դրամական»։ |



| | |
|---|---|
| Տարվա վերջում վերամշակված արտադրանքի դուրս գրումը (բացի ֆոնդերում առանձնացված անասնակերը)։ | № 12 «Ծախսեր ձեռնարկներում և արտադրանքի վերամշակման»։ |
| Սեփական տնտեսության արտադրանքի դուրս գրումը, ծախսված՝ | |
| ա) Արտադրական և տնտեսական կարիքների վրա. | № 14 «Արտադրական կարիքների վրա կատարված ծախսեր»։ |
| բ) Հասարակական սննդի վրա. | № 12 «Ծախսեր ձեռնարկներում և արտադրանքի վերամշակում»։ |
| գ) Շինարարության և կապիտալ ներդրման վրա։ | № 13 «Ծախսեր շինարարության մեջ և հիմնական նորոգում»։ |
| Արտադրանքի բնական կորուստի դուրս գրում (ընդհանուր ժողովի որոշմամբ) նույնպես և մաքրումից և տեսակավորումից տնտեսության մեջ մնացած անպետք տականքները։ | № 14 «Ծախսեր արտադրական կարիքների վրա»։ |
| Սեփական արհեստանոցներում պատրաստված և կոլտնտեսության օգտագործմանը հանձնված արտադրական միջոցների արժեքի դուրս գրում։ | № 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ «ենթահաշիվ 5-րդ» կուտակումներ շինարարության վրա և արտադրական միջոցների մեջ պատրաստված կոլտնտեսության կարիքների համար» կոլտնտեսության պատրաստած նյութերի արժեքը և կոլտնտեսականների աշխատանքային ներդրումները։ |
| Բնաբերքի առանձնացումը ըստ տրակտորիստների աշխօրերի (միաժամանակ գրելով № 6 հաշվի յեթե այդ գրանցումը չի կատարվել տարվա ընթացքում, ԿՏ. № 8) | № 9 Անբաժանելի դրամագլուխ և փայավճարներ ենթահաշիվ 5<br>№ 6 «հաշվարկներ կոլտնտեսականների հետ № 1 ենթահաշիվ» հաշվարկներ բնամթերքներ ըստ աշխօրերի։ |
| Արտադրանքի բաշխումը ըստ կոլտնտեսականների աշխօրերի։ | № 6 «հաշվարկներ կոլտնտանդամների հետ» ենթահաշիվ № 1-ին «հաշվարկներ բնաբերքով ըստ աշխօրերի»։ |

## ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՉՈՒՆԵՑՈՂ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՓԱԿՈՒՄԸ

*Բնաբերքային և դրամական յեկամուտների բաշխման հետ կապված գրանցումները կատարելուց հետո կոլտնտեսության հաշվապահը անցնում է մնացած մյուս հաշիվների գրանցումների փակմանը։*

*№ 10 հաշվի փակումը № 10 հաշվում «ձագեր և անասունների աճ» հաշվի առնված մատղաշ անասունների աճը և ձագերի ամբողջ արժեքը փոխանցվում է անբաժանելի ֆոնդի հոդվածով։*

*ԴՏ. հաշիվ № 10 «Անասունի աճ և ձագեր»։*

*ԿՏ. հաշիվ № 9 «Անաբաժնելի ֆոնդեր և փայական մուծումներ յենթահաշիվ № 4։*

*№ 12-րդ հաշվի փակումը «ծախսեր ձեռնարկներում և արտադրանքի վերամշակում» այս հաշվում գրանցումների փակումը բնամթերքով և դրամով կատարված ծախսերի մասի դուրս գրումը, մասամբ արդեն փակված է № 19 «Բնաբերքային յեկամուտ և նրա բաշխումը» հաշիվը փակելու ժամանակ և № 20-րդ «դրամական յեկամուտ և նրանց բաշխումը» հաշիվը փակելու ժամանակ։*

*Մանկապարտեզների, մանկամսուրների մանկահրապարակների վրա կատարված դրամական և բնաբերքային ծախսումները կատարվում են կուլտուրական ֆոնդի հաշվին և դուրս է գրվում հետևյալ հոդվածով.*

*ԴՏ. հաշիվ № 11 «կուլտուրական կարիքների և օգնության ֆոնդ»։*

*ԿՏ. հաշիվ № 12 «ծախսեր ձեռնարկներում և արտադրանքի վերամշակում»։*

*Սեփական տնտեսության կարիքների համար պատրաստված արտադրության միջոցների վրա ծախսված դրամական միջոցները և գնված նյութերը դուրս է գրվում հետևյալ հոդվածով։*

*ԴՏ. հաշիվ № 9 «անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» յենթահաշիվ 5 «շինարարության կուտակումները և արտադրության միջոցներ պատրաստված կոլտնտեսության կարիքների համար (պատրաստված նյութերի արժեք և կոլտնտեսականների աշխատանքային ներդրումը)»։*

*ԿՏ. հաշիվ № 12 «ծախքեր ձեռնարկներում և արտադրանքի վերամշակում։*

*Մթերքներ, վորոնք գտնվում են վերամշակման մեջ և արտադրության հիմնական միջոցների վրա կատարված այնպիսի ծախսեր, վորոնք դեռ չեն ավարտվել, № 12-րդ հաշվից դուրս չեն գրվում։*



*№ 13-րդ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ «շինարարական ծախսեր և կապիտալ ՆՈՐՈԳՈՒՄ։*

*Ավարտված շինարարություն, օգտագործման ընդունված այգիների խաղողանոցների, և այլն կրեդիտային մնացորդները, վորոնք առաջացել են № 13 հաշվում փոխանցվում են հետևյալ հոդվածով։*

*ԴՏ. հաշիվ № 13 «Շինարարական ծախսեր և կապիտալ նորոգում»։*

*ԿՏ. հաշիվ № 9 «անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» յենթահաշիվ № 5։*

*Ավարտված կապիտալ նորոգումների, հողաշինարարական, տոկոսներ ըստ կապիտալ ներդրումներին և այլն դեբետային մնացորդը դուրս է գրվում հետևյալ հոդվածով։*

*ԴՏ. հաշիվ № 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» յենթահաշիվ № 3 հատկացումներ դրամական յեկամուտից համաձայն արտելի կանոնադրության 12-րդ կետի։*

*ԿՏ. հաշիվ № 13 «Ծախքեր շինարարության մեջ և կապիտալ նորոգում».*

*Անավարտ շինարարության վրա, տնկարաններում կահավորում և կապիտալ նորոգումների վրա կատարված ծախսերը մնում են № 13-րդ հաշվում, վորպես դեբիտորային մնացորդներ և այս հաշվից դուրս չեն գրվում։*

*№ 14-րդ հաշվի փակումը «Արտադրական կարիքների վրա կատարված ծախսեր»։*

*№ 15 «հարկեր, գանձումներ և ապահովագրական վճարումներ» և № 16 «վարչա-կառավարչական և տնտեսական ծախսեր»։*

*Ընթացիկ տարվա բերքի հետ կապված ծախսերը։ Անասնակերի ֆոնդերի մասով, դուրս են գրվում վոչ թե կոլտնտեսության յեկամուտից, այլ անմիջապես ֆոնդից հետևյալ հոդվածով։*

*ԴՏ. № 9 հաշիվ «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ յենթահաշիվ 7» սերմային ֆոնդ (հիմնական և ապահովագրական) և № 8 «Անասնակերի ֆոնդ» (հիմնական և ապահովագրական)։*

*№ 14-րդ հաշվի կրեդիտով «Ծախքեր արտադրական կարիքների համար» ֆոնդային սերմերի և անասնակերի բնական կորուստի դուրս գրումը (կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշմամբ) ձևակերպվում է հետևյալ հոդվածով։*

ԴՏ. № 9 հաշիվ «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ ենթահաշիվ 7 և 8-ը:

ԿՏ. № 14 հաշիվ «Ծախսեր արտադրական կարիքների համար»:

Հետագա տարում վերադարձվող վարկերի նկատմամբ կատարված ծախսերը, նույնպես և դրամական ծախսերը, վորոնք նախատեսնվում են ծածկել հետագա տարվա յեկամուտների հաշվին № 14-րդ հաշվից դուրս չեն գրվում, այլ մնում են հետագա տարվա համար վորպես դեբետային մնացորդ, ընդ վորում կազմվում է հետևյալ հոդվածը.

ԴՏ. № 14 հաշիվ «Ծախսումներ արտադրական կարիքների վրա ենթահաշիվ № 3» ընթացիկ տարվա յեկամուտի հաշվին չծածկվող ծախսեր:

ԿՏ. № 14 հաշիվ «Ծախսեր արտադրական կարիքների վրա» ենթահաշիվ № 1 և 2: Աշնանացանի վրա սերմացուի ծախսը մնում է № 14 հաշվում «արտադրական կարիքների վրա կատարված ծախսեր» ենթահաշիվ № 1 «Ծախսեր բնաբերքային յեկամուտի հաշվին» դեբետային մնացորդով, այնքան վորքան նրանք փակվելու յեն հետագա տարում սերմֆոնդի հաշվին:

Մնացած բնաբերքային դրամանյութային ծախքերն վորոնք հաշվի յեն առնվել № 14 «Ծախսեր արտադրական կարիքների վրա», № 15 «Հարկեր, գանձումներ և ապահովագրական վճարումներ» և № 16 «Վարչա-կառավարչական ծախսեր» հաշիվներից դուրս են գրված № 19 և 20 հաշիվները փակելիս:

№ 17 «Պետական հանձնումներ և վաճառք» (բացի անասուններից) հաշիվը նույնպես փակված է առաջուց: Բոլոր դեբիտորային շրջանառությունը փոխանցվում է № 19 «Բնաբերքային յեկամուտներ և նրա բաշխումը» հաշվին, իսկ կրեդիտային շրջանառությունը № 20 «Դրամական յեկամուտի և նրանց բաշխման» հաշվին:

№ 18-րդ հաշվի փակումը «Արտադրության հիմնական միջոցների և անասունների դուրս գրումը» (հասակավոր և մատղաշներ):

№ 4 և 5 ենթահաշիվների կրեդիտային շրջանառու գումարները, վորոնք յենթակա յեն բաշխման մենք արդեն փոխանցել ենք № 20 հաշվին «Դրամական յեկամուտներ և նրա բաշխումը» իսկ բաշխման յենթարկվող գումարները № 9-րդ «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» հաշվին:

№ 1-ին յենթահաշվի «Արտադրության հիմնական միջոցների դուրս գրում (բացի անասուններից)» կրեդիտային շրջանառությունը փոխադրվում է № 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումների» հաշվին № 3 յենթահաշվին «Հատկացումներ դրամական յեկամուտից համաձայն գյուղ. արտելի օրինակելի կանոնադրության № 12-րդ հոդվածի:

Ոժանդակ հաշիվների կրեդիտային շրջանառությունը ըստ № 2-րդ յենթահաշվի «բանող անասունների վաճառք» № 3 յենթահաշվի «փոխպնակման նպատակով վաճառված մթերատու անասուններ» և № 7 յենթահաշվով «անասունների դուրս գրման այլ դեպքեր» նույնպես փոխանցվում է անբաժանելի ֆոնդ № 4 յենթահաշվին: «Անասունների աճման և բազմացման արժեքի մասհանումից»:

№ 18 հաշվի բոլոր յենթահաշիվների դեբետային շրջանառությունները հաշվի առնելով ուղղված գրանցումների գումարները դուրս են գրվում անբաժնելի ֆոնդի հաշվին (յենթահաշիվ № 3, 4 և 5 հաշիվ № 9-ի):

Կատարելով վերևում ցույց տրված գրանցումները, հաշվապահը պարտավոր է գրքերի հաշիվներից ըստ գլխավոր հաշիվների կազմել շրջանառության տեղեկագիր և դուրս բերել մնացորդ (Սալդո) ըստ առ մեկը հունվարի 39 թվի դրության:

## ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ԲԱԼԱՆՍԻ ԿԱԶՄՈՒՄԸ

Այն բոլոր հաշիվները, վորոնք շրջանառության տեղեկագրում տալիս են մնացորդներ (Սալդո) ցույց են տրվում յեզրափակիչ բալանսում:

Յեզրափակիչ բալանսի ակտիվում ցույց են տրվում այն հաշիվները, վորոնք ունեն դեբետային մնացորդներ.

Սրան վերաբերում են հետևյալ հաշիվները:

№ 1 «Արտադրության հիմնական միջոցներ» № 2 «մատղաշներ և բտման հանձնված անասուններ» № 3 «մթերքներ նյութեր» № 4 «դրամական միջոցներ» և № 5 «արժեքավոր թղթեր, փայեր ակտիվներ»: № 12 հաշվում «Ձեռնարկության ծախսեր և արտադրանքի վերամշակում» № 13-րդ հաշվում «Ծախսեր շինարարության մեջ և հիմնական նորոգում» և № 14 հաշվում «Ծախսեր արտադրական կարիքների վրա» ցույց են տրվում բալանսի

ակտիվում արտադրության կամ շինարարության այն օբյեկտում կատարված ծախքերը, վորոնք առ 1-ը հունվարի 39 թվի ավարտված չեն՝ և նույնպես № 14 հաշվով ցույց է տրվում ծախսերի գումարները, վորոնք ընթացիկ տարվա յեկամուտի հաշվին չեն փակվում։ Դեբիտորական պարտքերի գումարները (պարտք կոլխոզին), վորոնք հաշվի յեն առնված № 6 հաշվում «հաշվարքը կոլտնտեսականների հետ» և № 8 «հաշվարքներ հիմնարկների և անձերի հետ» նույնպես ցույց է տրվում յեզրափակիչ բալանսի ակտիվում։

Բալանսի ակտիվում գրված հաշիվները բնութագրում են կոլտնտեսությունում առկա յեղած միջոցները և ցույց է տալիս վորպես այդ միջոցների տեղադրում (ինչի մեջ են ներդրված)։

Յեզրափակիչ բալանսի պասսիվում ցույց են տրվում կրեդիտային մնացորդ ունեցող հաշիվները։

Նրան վերաբերում է հետեվյալ հաշիվները

№ 9 «Անբաժանելի ֆոնդ և փայական մուծումներ» և № 11 «ֆոնդեր օգնության և կուլտ կարիքների համար»։ Կրեդիտային պարտքերի գումարները (կոլխոզի պարտքը), վորոնք հաշվի յեն առնված № 6 հաշվում «հաշվարքներ կոլտնտեսականների հետ» և № 8 «հաշվարքներ հիմնարկ ձեռնարկների և անձերի հետ» նույնպես ցույց է տրվում յեզրափակիչ բալանսի պասսիվում։

Բալանսի պասսիվում գրված հաշիվները բնութագրում են կոլտնտեսության յեղած միջոցների առաջացման աղբյուրը և նպատակային նշանակությունը։

№ 10 «Ջագեր և անասունների աճ» № 15 «հարկեր, գանձումներ և ապահովագրական մուծումներ» № 16 «Վարչա-կառավարչական տնտեսական ծախսերը» № 17 «Պետական հանձնումներ և վաճառք» (բացի անասուններից) № 18 «Արտադրության հիմնական միջոցների և անասունների դուրս գրում (հասակավոր և մատղաշ) № 19 «բնամթերքային յեկամուտ և նրանց բաշխումը» № 20 «Դրամական յեկամուտ և նրանց բաշխումը» հաշիվները յեզրափակիչ բալանսում չեն յերևում այնքան վորքան նրանք ինչպես մենք տեսանք լրիվությամբ փակվում են յեկամուտների բաշխման ժամանակ։



# ՀԱՇԻՎՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՅԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՆՈՐ ԳՐՔԵՐՈՒՄ

Վորպեսզի համոզվենք դուրս բերված մնացորդների ճշտությունը ինչպես յուրաքանչյուր ոժանդակ հաշվով առանձին վերցված նույնպես և ամբողջությամբ վերցված ըստ գլխավոր հաշիվների, հարկավոր է նրանցում կատարել յեզրափակիչ տարածումներ։

Այդ նպատակով դեբետային մնացորդ ունեցող հաշիվներում դեբետային մնացորդները գրվում են նույն այդ հաշվի կրեդիտում, իսկ կրեդիտային մնացորդ ունեցողները դեբետում։

Յերկկողմանի (ծավալված) մնացորդ հաշվարքային հաշվի մեջ ոժանդակ հաշվում, ինչպես հայտնի չի կարող լինել, հետեվաբար յեզրափակման գրանցումները ըստ հաշվարքային հաշիվների կատարվում է այնպես ինչպես մյուս յերկու դեպքերում։ Դեբետային մնացորդները գրվում են հաշվի կրեդիտում և կրեդիտային էլ դեբետում։

## ԲԵՐԵՆՔ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՈՐԻՆԱԿՆԵՐ

ոժանդակ հաշիվների փակման գծով հաշիվ բանող ձիերի

| Ժամանակը | Գլխավոր հաշիվների գրքի հոդվածի № | Ումից է մուտք յեղել կամ ում է տրված | Գինը | Դեբետ | | Կրեդիտ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Քանակը | Գումարը | Քանակը | Գումարը |
| | | Առ 1/I 38 թ. առկա քանակ | — | 82 | 48264 | — | — |
| 4/XI | 115 | Վաճառված է մերուն «Սոկոլ» 15 տարեկան | 150 | — | — | 1 | 150 |
| 10/XI | 121 | Փոխադրված է մատղաշներից ակտ № 6 | 200 | 4 | 800 | — | — |
| 28/XI | 128 | Գնված է մերուն «ծանրաքաշ» | 750 | 1 | 750 | — | — |
| | | Ընդամ. շրջանառություն | — | 5 | 1550 | 1 | 150 |
| | | Մնացորդ առ 1/I 1939 թ. | — | — | — | 86 | 40664 |
| | | Ընդամենը | | 87 | 49814 | 87 | 49814 |

Բերված օրինակից յերևում է, վոր հաշիվը հավասարակշռված է կամ ինչպես ասում են յեզրափակված է։ «Գլխավոր գրքի հաշիվներում» հաշիվները յեզրափակելու համար մնացորդները (Սալդո) նույնպես գրանցվում են հակառակ կողմում։ Ընդ վորում հաշվառքային հաշիվներում յերկկողմանի մնացորդ ունենալու դեպքում (հաշիվ № 6 և 8) վոչ մի կերպ չի կարելի դուրս բերել թվաբանական ճանապարհով (այսինքն փոքր գումարները մեծից հանելու ճանապարհով)։

Հաշվառքային հաշիվների մնացորդները վերցվում են շրջանառության տեղեկագրից և գրանցվում է «գլխավոր հաշիվների գրքում» դեբետի սյունյակին՝ կրեդիտը, իսկ կրեդիտի սյունյակին դեբետը։

«Գլխավոր հաշիվների գրքում» հաշիվների յեզրափակման գծով գրանցումների օրինակներն ունեն հետևյալ տեսքը։ (Տես եջ

Օժանդակ գրքերում և «գլխավոր հաշիվների գրքում» ընթացիկ տարում հաշիվները յեզրափակվելուց հետո հարկավոր է գրքերում բաց անել հաշիվներ նոր գործառնական տարվա համար։

Ներմուծվող (սկսվող) բալանսի գումարները հաշիվներում գրանցելը կատարվում է այսպես.

ա) դեբետային մնացորդները, վորոնք ցույց են տրված անցած տարվա գրքերում հաշվի կրեդիտի կողմը, նոր տարվա գրքերում գրանցվում են հաշվի դեբետում։

բ) կրեդիտային մնացորդները, վորոնք անցած տարվա գրքերում ցույց են տրված հաշվի դեբետի կողմը, նոր տարվա գրքում գրանցվում են հաշվի կրեդիտում։

Ցույց տանք «գլխավոր հաշիվների գրքով» ներմուծվող բալանսի գումարները։



Նոր գործառնական տարում գրանցելու կարգը

| Թվականը | Հաշիվ №-ը | Գրանցման բովանդակությունը | Շրջանառու գումար | Արտադրական հիմնական միջոց. № 1 | | Մթերքներ նյութեր № 3 | | Հաշվառքներ անդամների հետ № 6 | | Անբաժանելի և փայական ֆոնդ № 9 | | Յեվ այլ բաա գլխավոր հաշիվների գրքի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Դեբետ | Կրեդ. | Դեբետ | Կրեդ. | Դեբետ | Կրեդ. | Դեբետ | Կրեդ. | |
| | | Շրջանառութ. 12 ամս. | 426510 | 3477 | 450 | 2294 | 1039 | 1010 | 89653 | 350 | 120 | |
| | | Տարվա շրջանառութ. | 1.127257 | 25819 | 19072 | 146772 | 146027 | 84022 | 89653 | 2737 | 37832 | |
| | | Առ 1/I 38 թ. մնացորդի հետ | 1328079 | 114252 | 19702 | 197801 | 146027 | 85322 | 131672 | 3087 | 165682 | |
| | | Մնացորդ առ 1/I 39 թ. | 227158 | — | 94550 | — | 31774 | 46882 | 532 | 162595 | — | |
| | | Բ ա լ ա ն ս | — | 114252 | 114252 | 197801 | 197801 | 132204 | 132304 | 165682 | 165682 | |

| Թվական | Հոդված № | Գրանցման բովան-դակությունը | Ընդամենը գումար | № 1 արտ. հիմ. միջոց. | | № 3 մթերք. և նյութ. | | № 6 հաշվարկ. կոլտնտեսա-կանների հետ | | № 9 անբաժ. ֆոնդ և փա-յական մու-ծումներ | | Ցույց այլն ըստ գլխավոր հա-շիվների |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Դեբետ | Կրեդ. | Դեբետ | Կրեդ. | Դեբետ | Կրեդ. | Դեբետ | Կրեդ. | |
| | | Սկսվող բալանսի | 227158 | 94550 | | 51774 | | 532 | 46882 | — | 162595 | |

Նույն ձևով կատարվում են նաև սկսվող բալանսի գումարնե-րը ժամանակ հաշիվների գրքերում տարածելու ժամանակ



Սկսվող բալանսի գումարները նոր գործառնական տարվա գրքերում ըստ հաշիվների գրանցվելուց և շրջանառության տե-ղեկագրի միջոցով գրանցում ենք՝ ճշտությունը ստուգելուց հետո, հաշվապահը կարող է անցնել տնտեսական ընթացիկ գործարք-ները ըստ հաշիվների տարածելու աշխատանքին։

* * *

Հաշվապահական գրանցումները գրքերում, ինչպես վերևում մենք տեսանք տալիս է սիստեմի վերածված նյութ մուտք և ելքի նախահաշվի հաշվետվության համար և տարեկան հաշվե-տվության հիմնական տախտակը լրացնելու համար։

Կոլխոզային հաշվառման գծով աշխատողները պարտավոր են այդ նյութերը պատրաստել այնպես, որ նրանք վերստուգիչ հանձնաժողովի ստուգման համար և կոլտնտեսականների ընդհա-նուր ժողովում վարչությանը զեկուցելու համար մատչելի լինի։

Հարկավոր է հասնել այն բանին, որ յուրաքանչյուր կոլ-տնտեսական լսելով վարչության զեկուցումը և վերստուգիչ հանձ-նաժողովի հարակից զեկուցումը կոլտնտեսության ամբողջ տար-վա գործունեության մասին, պարզ պատկերացում ունենա՝ թե ինչից են գոյացել կոլտնտեսության դրամական և բնաբերքա-յին եկամուտները, կոլտնտեսությունը ինչպես է կատարել պե-տական պարտավորությունները, ինչպիսի ծախսեր ծածկված են ընթացիկ տարվա եկամտի հաշվին և կամ թողնված են հետա-գա տարում փակելու, ֆոնդերին ինչպիսի հատկացումներ է կա-տարված և ինչ չափով, եկամուտի որ մասն է գնում ըստ աշ-խօրերի բաշխման յենթարկելու, կոլտնտեսությունը իր մի տար-վա աշխատանքի ընթացքում ինչ արդյունքների յե հասել։

Հարկավոր է հաշիվների փակման աշխատանքները ուշադիր կերպով պատրաստել և նրան անցկացնել լրիվությամբ համա-ձայն գյուղ. արտելի Ստալինյան կանոնադրության և կուսակ-ցության ու կառավարության վորոշումների։

Թարգմանիչ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Խմբագիր՝ 1. Գ. ՍՈՒՔՅԱՍՅԱՆ
2. Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

1938 թվի բերքի բաշխման __________ կոլտնտեսություն __________ Գյուղխորհուրդ __________

շրջան __________ Հանրապետություն

1938 թվի ձեռք բերված աշխարհ՝ կոլտնտեսականները __________

Տրակտորիստները __________

Ընդամենը __________

| №№ ըստ կարգի | Կոլտնտեսության անունը | Փաստացի հնձված տարածության քանակը հեկտարով | Փաստացի հնձված տարածության 1 հեկտարից ստացված բերքը ցենտներով (կոմբայնով) | Ընդամենը հավաքված և ներքաշված բերքը (ցենտ.) | Արժեքը | Ընդհանուր հավաքածից արժեք պարտավորությունները (ցենտներով) | Ընդհանուր հավաքված: Պարտադիր կարգով պետությանը հանձնելու վաճառք և պայմանագրային հանձնում փաստացի և վոչ թե հաշված (քաշով) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | քանակը | գումարը |
| 1 | 1 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |

Տեղեկագրի շարունակությունը

**Բ Ե Ր Ք Ի   Բ Ա Շ Խ Ո Ւ Մ Ը**

| Բնամթերք ՄՏԿ-ի աշխատանքների համար | | Սերմերի վերադարձ | | Առանձնացվում է սերմնացուի ֆոնդ | | Առանձնացվում է անասնապահական կերի ֆոնդ | | Առանձնացվում է ապահովագրական ֆոնդ | | Առանձնացվում է անաշխատունակների օգնության ֆոնդ | | Առանձնացվում է օգնության ֆոնդ, հաշմանդ. ծերերին, ժամանակավորապես աշխատունակ. կորցրածներին կարմ. բանակ. կարիքավոր ընտանիք. մանկամս. և փոքրերի պահպան. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գումար |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| | | | | | | | | | | | | | |

Տեղեկագրի շարունակությունը

| Փաստորեն վաճառված է պետ մթերողների (կոլխոզ առևտրի կարգ) | | Փաստորեն վաճառված է կոլխոզ շուկայում այլ վաճառքներ | | Առանձնացված է վաճառելու կոլտնտ. առևտրի կարգով, բայց դեռ չի վաճառված | | Այլ ծախքեր չորանոցում պահպանության ժամանակ, մաքրումից, տեսակավորումից տեղի ունեցած պակասուք և այլն | | Վորոշված է հանձնելու ըստ աշխօրերի կոլտնտ. և տրակ. ներքին (սեփական) փաստացի տրված է | | Հասնում է մեկ աշխօրին կիլոներով | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | Կոլտնտեսական | | Տրակտորիստ. | |
| քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. | քանակ | գում. |
| 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 |
| | | | | | | | | | | | | | |

2

24.586